պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Վերածնունդ 7» ՍՊԸ-ի, «Արմեն-Շին» ՍՊԸ-ի, «Արամե» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.11.2025 թվականի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ Հայցվորների հայտը մերժելու մասին որոշումը, թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու և Հայցվորներին ընտրված մասնակից ճանաչելու պահանջների մասին, բավարարել մասնակի.

անվավեր ճանաչել թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.11.2025թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ «Վերածնունդ 7» ՍՊԸ, «Արմեն-Շին» ՍՊԸ, «Արամե» ՍՊԸ կոնսորցիումի հայտը մերժելու մասին որոշումը,

անվավեր ճանաչել թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշումը:

Հայցը՝ մնացած՝ «Վերածնունդ 7» ՍՊԸ-ի, «Արմեն-Շին» ՍՊԸ-ի, «Արամե» ՍՊԸ-ի կոնսորցիումին թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասով, մերժել:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Վերածնունդ 7» ՍՊԸ-ի, «Արմեն-Շին» ՍՊԸ-ի, «Արամե» ՍՊԸ-ի բռնագանձել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն՝ նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEF2-B6EE-40D7-B8CD հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am